



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto... 27... Մայիս... 1981.

Գերաշնորհ
Տէր Թորգոմ Ս.Արք. Մանուկեան
Առաջնորդ,
Նախագահ Թեմական Խորհուրդի
Նիւ Եօրք.

Սրբազան Հայր,

Ձերդ Սրբազնութեան, Եկեղեցւոյս հոգեւոր հովիւ Արժանապատիւ
Տէր Յուսիկ Քհնյ. նշանեանին ուղղեալ, 25 Ապրիլ 1981 թուակիր եւ
27291 թիւ նամակը Տէր Հայրը ծխական Խորհուրդիս փոխանցեց:

Հոս ցաւով կը գրենք, թէ Գանատայի Հայաստանեայց Եկեղեցւոյ
Թեմական կանոնադրութիւնը պատրաստելու պարտականութեամբ կազմուած
յանձնախումբը, իր յաջորդական երկու ժողովներուն, ժողովի սահմա-
նափակ ժամերուն շատ թանկագին մէկ մասը, առանց իր իրաւասութեան
սահմաններուն մէջ ինկած ըլլալու, Եկեղեցւոյս Թեմական տուրքի
հարցին տրամադրած է: Յանձնախումբը իր այս արարքով թէ՛ իր լիազո-
րութեան սահմաններէն դուրս ելած կ'ըլլայ եւ թէ՛ Վեհափառ Հայրապե-
տի հրահանգին՝ Հայրապետական վճռին կարճ ժամանակի մէջ ի կատար
ածման հակառակ գործած:

Յանձնախումբի կարգ մը անդամներուն, ներառեալ հոգեւորական
մը, ծուխիս ներկայացուցիչին հանդէպ ունեցած արտայայտութիւնները
ոչ ժողովականի մը, ոչ հոգեւորականի մը եւ ոչ ալ զիտակից անձի
մը վայել եղած են:

Ձերդ Սրբազնութեան վերոյիշեալ նամակով տուած հրահանգը, Գա- նատական Տուրքերու Գործակալութեան Առաջնորդարանի փաստաբան Պր. Ե. Չափեանի առ ի պատասխան դրկած 1 Ապրիլ 1981 թուակիր նամակի բովան- դակութեան լոյսին տակ, իրագործել կարելի չեղաւ:

Ժխական Խորհուրդս, 25 Մայիս 1981 օրուայ իր հերթական նիստին հետեւեալ կէտերը նկատողութեան առնելով.

Ա- Օրինական դժուարութիւններու պատճառաւ յառաջ եկած այս կա- ցութիւնը, մտքերը պղտորելու նպատակաւ չարաշահող կարգ մը շրջանակ- ներուն քանդիչ աշխատութեան վերջ մը տալու " յոյս " ով.

Բ- իր իրաւասութեան սահմանէն շեղելով, աշխատութիւնները չա- փէն աւելի դանդաղ ընթացող Գանատայի Թեմական նախապատրաստական Աշ- խատանքներու Յատուկ Վարչութեան աշխատութիւնները արագացնելու " յոյս " ով.

Գ- Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով 15 նոյեմբեր 1980 թուականէն սկսեալ Միացեալ Նահանգներու Թեմական կազմակերպութե- նէն անջատուած եւ ինքնորոյն թեմական վիճակ հռչակած Գանատական Թե- մը մը ամենակարճ միջոցի մէջ գործնական կերպով ալ տեսնելու " յոյս " ով.

Որոշած է՝ Առաջնորդարանի կողմէ պահանջուած թեմական տուրքը փոխանցել Գանատայի Թեմական նախապատրաստական Աշխատութիւններու Յա- տուկ Վարչութեան:

Ծուխիս տարեկան անդամական ժողովի ընթացքին կատարուած ընտրու- թիւնները առ ի վաւերացում 13 Ապրիլ 1981 թուակիր նամակով մը Առաջ- նորդարան դրկած էր: Ցարդ վաւերացումները չենք ստացած: Ձերդ Սրբազ- նութենէն յատկապէս կը խնդրենք, որ պատասխան նամակով, վաւերացում- ները բարեհաճիք տեղեկացնել:


Մատչիմք ի Համբոյր Ձերդ Սրբազնութեան Աջին

Ի Դիմաց

Ժխական Խորհուրդի

Յարգ. Վաչէ Զերամբլեան.

Տօքթ. Վաչէ Զերամբլեան
Ատենադպիր


Արմէն Զիւրքճեան
Ատենապետ

*Offawa letter to Arman
Hos. Cross to write a letter to Offawa
Assessments to be paid to Canadian Bank
1981 Assessments also to be paid.*